https://doi.org/10.46991/hc.2025.si1.170

The Representation of Armenians and the Armenian Question in Turkey's 11th Grade Secondary School History Textbook

Kristine Melkonyan
https://orcid.org/0000-0003-3066-8178
YSU Chair of the History of Armenia's Neighboring Countries, Associate Professor, PhD
chmelkonyan@ysu.am

Keywords - history textbook, Armenians, Armenian question, Ottoman Empire, Turkey, genocide, Russia, England.

Textbooks of Turkish history is considered one of the most influential methods of denial of the Armenian Genocide as well as the formation of negative mindset towards the Armenian people. In the handbooks of Turkish history Armenians are presented under an extremely negative light. The period of Armenian question from 1878 to 1923 is presented with rough errors and deliberate distortions of historical facts. Furthermore, according the logic of handbooks the existence of our people and the Armenian question are considered to be a threat to Turkish national security.

Հայերի և Հայկական հարցի ներկայացումը Թուրքիայի հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի պատմության դասագրքում

Քրիստինե Մելքոնյան
ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն, դոցենտ, պ.գ.թ.

Բանալի բառեր - պատմության դասագիրք, հայեր, Հայկական հարց, Օսմանյան կայսրություն, Թուրքիա, ցեղասպանություն, Ռուսաստան, Անգլիա:

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 170-179.

Received: 21.11.2024
Revised: 17.02.2025
Accepted: 29.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Թուրքական պատմության դասագրքերը համարվում են Հայոց ցեղասպանության ժխտման ամենաազդեցիկ միջոցներից մեկը, ինչպես նաև հայ ժողովրդի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորման աղբյուր: Թուրքական պատմության ձեռնարկներում հայերը ներկայացվում են չափազանց բացասական լույսի ներքո: Հայկական հարցը 1878-ից 1923 թվականները ներկայացվում է խոշոր սխալներով և պատմական փաստերի դիտավորյալ խեղաթյուրումներով: Մինչդեռ, ըստ դասագրքերի տրամաբանության, մեր ժողովրդի գոյությունն ու Հայկական հարցը համարվում են Թուրքիայի ազգային անվտանգության համար սպառնալիք:

Представление армян и Армянского вопроса в учебнике истории для 11 класса общеобразовательной школы Турции

Кристине Мелконян
ЕГУ кафедры истории сопредельных стран Армении, доцент, к.и.н.

Ключевые слова - учебник по истории, армяне, армянский вопрос, Османская империя, Турция, геноцид, Россия, Англия.

Учебники турецкой истории, утвержденные Министерством национального образования Турции, считаются одним из самых влиятельных методов отрицания армянского геноцида, а также формирования отрицательного отношения к армянскому народу. В этих учебниках армяне представлены в исключительно негативном свете. Период армянского вопроса с 1878 по 1923 год изложен с грубыми ошибками и преднамеренными искажениями исторических фактов. Более того, согласно логике этих учебников, существование нашего народа и армянский вопрос рассматриваются как угроза национальной безопасности Турции.

* * *

Մուտք: Թուրքական դպրոցական դասագրքերը յուրովի են ներկայացնում հայերին, հայերի ապրած կյանքը Օսմանյան կայսրությունում և Հայկական հարցի առաջացումը: Այստեղ կարևոր է արձանագրել, որ, ըստ թուրքական դասագրքերի, հայերը և թուրքերը մինչև XIX դարը որևէ խնդիր չեն ունեցել, ամեն ինչ սկսվել է XIX դարի վերջին քառորդում, երբ մեծ տերությունները օգտագործել են հայ ժողովրդին իրենց իսկ քաղաքական խնդիրները առաջ մղելու նպատակով, իսկ հայերն էլ, որոնք մինչ այդ համերաշխ էին ապրում Օսմանյան կայսրության տարածքում, ըմբոստացել են ընդդեմ պետության:

Հոդվածի ուսումնասիրության թեման Թուրքիայի պատմությունն է՝ ըստ թուրքական դասագրքերի: Որպես ուսումնասիրման նյութ է ընտրվել Թուրքիայի միջնակարգ

կրթության (դպրոցի) 11-րդ դասարանի պատմության դասագիրքը, որը շրջանառության մեջ է դրվել 2023-2024 ուս. տարում՝ 5 տարվա ժամկետով: Դիտարկվել է՝ IV բաժնի («Ռազմավարության հավասարակշռություն միջազգային հարաբերություններում (1774-1914թթ.)») «Հայկական հարցի առաջացումն ու զարգացումը» խորագրով թեման:

Հետազոտության շրջանակում իրականացվել է բովանդակային վերլուծություն, որը ընթացքում առանձին դիտարկվել են դասի ընթացքում առաջադրվող հարցերը, հակահայկական և ցեղասպանության վերաբերյալ թուրքական թեզերը: Թեման ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները (1877-1920 թթ.):

Բովանդակային վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին, որ դասի ընթացքում, դիտարկում է մի քանի հարցեր, որոնք ընթարացված են մեկ ընդհանուր թեմայում:

Երկրորդ՝ Հայկական հարցը բնութագրվում է որպես կեղծ կատեգորիա՝ նշելով, որ Հայկական հարց որպես այդպիսին գոյություն չունի. այն ի հայտ եկավ Ռուսաստանի և Անգլիայի շահերին համահունչ, որոնք ցանկանում էին քայքայել Օսմանյան կայսրությունը:

Երրորդը՝ տեքստը ունի հակահայկական ուղղվածություն, որտեղ հայերը ներկայացվում են՝ որպես արտաքին ուժերի կողմից շահարկվող, «դավաճան» համայնք, որի գործողությունները արդարացնում են Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը:

«Հայկական հարցի առաջացումն ու զարգացումը» խորագրով թեմայում ներկայացված հարցերը և հակահայկան տարրերը: Թուրքիայի միջնակարգ կրթության (դպրոցի) 11-րդ դասարանի պատմության դասագիրքում տեղ գտած «Հայկական հարցի առաջացումն ու զարգացումը» խորագրով թեման թիրախավորում է 1878-1920 թթ.: Ըստ թուրքական պատմագրության՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում առաջացած Հայկական հարցը իր հանգուցալուծումը ստացել է դեռևս 1920 թ., երբ 1920 թ. դեկտեմբերի 3-ին կնքվեց Գյումրիի պայմանագիրը (Ք.Մ., Ալեքսանդրապոլի պայմանագիր): Ավելին թեման բավականին բազմաբովանդակ է, այն իր մեջ ներառում է մի շարք հարցեր, որոնք կարել էր դիտարկել առանձին ենթավերնագրերով:

Դասի տեքստի վերլուծության արդյունքում առանձնացրել ենք այն հարցերը, որոնք դասագրքի հեղինակները ամբողջականացրել են մեկ ընդհանուր թեմայում: Դրանք են.

- հայերի կրոնական ազատությունը և հասարակական դիրքը Օսմանյան կայսրությունում: Ըստ դասագրքի հեղինակների, Օսմանյան կայսրության քաղաքական կարգի համաձայն՝ հայերին շնորհված կրոնական ազատությունն ու հասարակական դիրքը թույլ էին տալիս պահպանել իրենց ինքնությունը և ակտիվ մասնակցել երկրի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին: «Հայերը, հատկապես կայսրության

սկզբնական շրջանում, ազատ էին կատարելու իրենց կրոնական պարտականությունները և անգամ հնարավորություն ունեին նշանակելու սեփական հոգևորականներին», - գրված է դասագրքում [Yılmaz, 2023, 146]:

• Արևելյան հարցը, Հայկական հարցը և մեծ պետությունների ազդեցությունն Օսմանյան կայսրությունում: Ըստ հեղինակների՝ 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրության թուլացման հետ միաժամանակ, Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան սկսեցին օգտագործել հայերին որպես գործիք իրենց քաղաքական շահերի համար՝ Օսմանյան կայսրության հանդեպ ճնշումներ գործադրելու նպատակով: Տեքստում դիտարկվում էին Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի հոդվածները, որոնք առաջարկում էին բարեփոխումներ հայերի համար, «ինչը մեծ պետություններին հնարավորություն էր տալիս միջամտել Օսմանյան կայսրության ներքին գործերին» [Yılmaz, 2023, 146]: Մինչդեռ թուրքական դասագիրքը չի բացատրում, թե ինչն էր պատճառը, որ նախկինում թուրքերի հետ որևէ խնդիր չունեցող հայերը հանկարծ տրվեցին մեծ տերությունների սադրանքներին և սկսեցին պայքար մղել Օսմանյան կայսրության դեմ: Ընդհակառակը Հայկական հարցը ներկայացվում է որպես արտաքին քաղաքական գործիք՝ տարածաշրջանում Ռուսաստանի և Անգլիայի ազդեցությունը մեծացնելու և Օսմանյան կայսրությանը թուլացնելու նպատակով:

• Հայկական կազմակերպությունների ստեղծում և հայերի ապստամբություններն Օսմանյան կայսրությունում: Տեքստում նշվում են երկու կարևոր հայկական կուսակցությունները՝ «Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը» և «Հ. Յ. Դաշնակցական կուսակցությունը», որոնք նպատակ ունեին ստեղծել անկախ հայկական պետություն և իրենց գործողություններով ներգրավել եվրոպական պետություններին: Այս կազմակերպությունները (Ք. Մ., կուսակցությունները) տեղական ապստամբություններ սկսեցին տարբեր վայրերում, ինչպիսիք են Վանը, Սասունը և Բիթլիսը [Yılmaz, 2023, 146]: Նկատենք, որ տվյալ հատվածում պարզապես թվարկվում են այդ իրադարձությունները, և չկա գեթ մեկ դեպք, որն անդրադարձ կատարի նաև այս կամ այն իրադարձության պատճառներին:

• Հայերի «Տեղահանության մասին օրենքը» (Zorunlu Göç kanunu) Առաջին աշխարհամարտի տարիներին: Թուրք հեղինակները, խեղաթուրելով պատմությունը, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության պատասխանատվությունը բարդում են հայերի վրա՝ նշելով, որ Օսմանյան կառավարությունը, ի պատասխան հայերի կազմակերպված ապստամբություններին, 1915 թվականին ընդունեց հայերի «Տեղափոխման և բնակության օրենքը», որի միջոցով հայերը պետք է գաղթեին դեպի ավելի ապահով վայրեր, ինչպիսիք էին Սիրիան և Իրաքի հյուսիսային շրջանները: Գաղթի ընթացքում որոշ հայեր մահացան հիվանդություններից և եղանակային վատ պայմաններից [Yılmaz, 2023, 146-147]:

• Հայերի և թուրքերի հարաբերությունները հետպատերազմյան շրջանում: Դասի վերջին հատվածում ներկայացնում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո որոշ եվրոպական պետություններ, ինչպիսիք են Անգլիան և Ֆրանսիան, հայերին խոստացան աջակցել հայկական պետության ստեղծման հարցում, սակայն թուրքական բանակը կանխեց այդ փորձերը և պահպանեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը [Yılmaz, 2023, 147]: Նկատենք, որ Թուրքիայի համար ոչ ձեռնտու Սևրի պայմանագիրն ընդհանրապես չի հիշատակվում: Փոխարենը բավականին հակիրճ և ազգայնամոլական շեշտադրումով անդրադառնում է 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագրին [Yılmaz, 2023, 147]:

Ակնհայտ է, որ նման կերպ ներկայացվածից որևէ ընթերցողի մեջ չի կարող դրական տպավորություն առաջանալ հայ ժողովրդի մասին, հատկապես եթե անընդմեջ կիրառվում են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսին են «ռուսների և անգլիացիների կողմից հրահրված հայերը», «հայկական ավազակախմբեր» և այլն: Ավելին՝ դասում տեղ գտած փաստերը խեղաթյուրված են, իսկ բովանդակության մեջ առկա են հակահայկական տարրեր: Առանձնացնենք հիմնականները.

• Պատմական փաստերի աղավաղում և հայերին ներկայացված մեղադրանքներ: Տեքստը ներկայացնում է հայերին՝ որպես իմպերիալիստական պետությունների գործիքներ, որոնք «օգտագործվել են» Օսմանյան կայսրության դեմ: Հայերը մեղադրվում են ապստամբություններ կազմակերպելու, օսմանյան կառույցների վրա հարձակումներ իրականացնելու և մահմեդական բնակչության կոտորածների համար: Սա նսեմացնում է հայերի պայքարը անկախության և արդարության համար՝ դրանք ներկայացնելով որպես արտաքին ուժերի շահերի արդյունք: «Հայերը սկսեցին կազմակերպվել իմպերիալիստական պետությունների աջակցությամբ: Այդ նպատակով նրանք ստեղծեցին կոմիտեներ, ավազակախմբեր: Դրանցից ամենակարևորներն էին 1887 թվականին Ժնևում հիմնադրված «Հնչակյան կուսակցությունը» և 1890 թվականին Թբիլիսիում հիմնադրված «Դաշնակցական կուսակցությունը»: Երկու կուսակցությունների նպատակներն էին Արևելյան Անատոլիայում օսմանյան հողերի հաշվին հայկական պետության ստեղծումը և, ապստամբություններ իրականացնելով, եվրոպական պետություններին ներքաշել գործընթացների մեջ»,- գրված է դասագրքում [Yılmaz, 2023, 146]: Բացի այդ, հայկական ազգային ջոկատները ներկայացնում են որպես «ավազակախմբեր»՝ ընդհանրացնելով հայերի մասնակցությունը Օսմանյան կայսրության դեմ պայքարին՝ որպես խռովարարություն և ահաբեկչություն: «Գործելով այդ նպատակներով՝ հայկական ավազակախմբերը ապստամբեցին Վանում 1896 թ.: Այս ապստամբությանը հաջորդեց օգոստոսի 26-ին Ստամբուլի Օսմանյան բանկի վրա հարձակումը: 1904 թվականին Սասունի ապստամբությունը, իսկ 1905 թվականին հայկական կոմիտեի անդամները մահափորձ են կատարել սուլթան Աբդուլ Համիդ II-ի դեմ: 1909 թ. նրանք

իրականացրեցին այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին Ադանայի և նրա շրջակայքի ճանապարհները փակելը, ոստիկանական բաժանմունքները ներխուժելը և քաղաքացիական անձանց ջարդերը» [Yılmaz, 2023, 146]:

Բացի այդ, պետք է նկատել, որ դասն ունի մի նրբություն. թուրքական պատմագրությունը հայերի՝ ապստամբելու պատճառը ներկայացնում է այն, թե իբր մեծ տերություններն են հրահրել, հայերն էլ, տրվելով սադրանքներին, ապստամբել են Օսմանյան կայսրության դեմ: Այս նուրբ ձևակերպումը ընթերցողին փորձում է հասցնել, որ հայերը ապստամբելու որևէ պատճառ չեն ունեցել, մինչ այդ թուրքերի հետ ապրել են հաշտ և համերաշխ և հանկարծ, տեղի տալով ռուսական և անգլիական սադրանքներին, ըմբոստացել են: Մինչդեռ, ճշմարտությունը նրանում է, որ հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության տարբեր ժամանակաշրջաններում մշտապես ենթարկվել է բազմապիսի ճնշումների և անընդմեջ փորձել են թոթափել թուրքական լուծը, և այդ համատեքստում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հարմար առիթ է ընկալվել հայ ժողովրդի նպատակները իրականացնելու համար: Այլ կերպ ասած՝ դասի շրջանակում Հայկական հարցը ներկայացվում է համաձայն թուրքերական պաշտոնական տեսակետի, որտեղ հայերը դիտվում են որպես դավաճաններ և սպառնալիք Օսմանյան կայսրության կայունության համար:

- Ցեղասպանության փաստի արդարացում: Դասի տեքստում Հայոց ցեղասպանության հարցը անուղղակիորեն արդարացվում է՝ նշելով, որ հայերի դեմ ձեռնարկված գործողություններն Օսմանյան կայսրության պաշտպանական քայլեր էին՝ նպատակ ունենալով «ապահովել բնակչության անվտանգությունը»: Տեքստը ցեղասպանությունը ներկայացնում է որպես հարկադրաբար իրականացված վերաբնակեցման գործընթաց՝ հայերին «ապահով շրջաններ» տեղափոխելու անհրաժեշտությամբ, և անտեսում է զանգվածային կոտորածների փաստը: Թուրքական դասագրքում գրված է. «Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց որոշ ժամանակ անց ռուսները հրահրեցին հայերին ապստամբության ընդդեմ Օսմանյան կայսրության: Որոշ հայկական ավազակախմբեր ճակատի հետևում կոտորել են մահմեդականներին: Հայկական ավազակախմբերը կրկին ապստամբություններ են սկսել 1915 թվականին Վանում՝ ապրիլի 15-ին, Սասունում՝ ապրիլի 17-ին, Բիթլիսում՝ ապրիլի 18-ին, Վանում՝ ապրիլի 20-ին:

Սասունում կոտորել են պետական ծառայողների ու ժանդարմների: Արևելյան Անատոլիայում հայերի ապստամբություններից և ջարդերից հետո Օսմանյան կառավարությունը քայլեր ձեռնարկեց՝ ապահովելու տարածաշրջանի բնակչության անվտանգությունը: Նախ նա ընդունեց ապստամբ հայերի «Տեղափոխման և բնակության օրենքը» (27 մայիսի 1915 թ.): Այնուհետև նա ստիպել է ռազմաճակատի մերձ շրջաններում ապրող հայերին գաղթել երկրի առավել ապահով շրջաններ՝ Սիրիայի և Իրաքի

հյուսիսային շրջաններ: Օսմանյան կառավարությունն այս գաղթի շարժումը պատահական չի իրականացրել: Պետական անվտանգության ուժերի կողմից իրականացված այս գաղթերի ընթացքում ամբողջ սնունդը ապահովվել է ժողովրդի համար: Սակայն այս գաղթի ընթացքում որոշ հայեր մահացան հիվանդության և ցուրտ եղանակային պայմանների պատճառով: Մյուսները ապահով տեղակայվել են նշանակված վայրերում» [Yılmaz, 2023, 146-147]:

Թուրքիայի պատմության դասագրքում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության վերաբերյալ անդրադարձի վերոնշյալ հատվածը իրականության խեղաթյուրման բացառիկ դրսևորումն է: Որևէ աղերս չունենալով իրականության հետ, անհաջող և անփույթ փորձ է դահճին ներկայացնել զոհի կերպարանքով և հակառակը, իսկ Օսմանյան պետությանը՝ իբրև թե հոգատար իր հայ քաղաքացիների նկատմամբ:

Ավելին՝ հայերին, ովքեր տեղահանվել էին 1915 թվականին, թեմայում ներկայացված է, թե իբր նրանք վերադարձվել են իրենց տները, ունեցվածքը վերադարձվել է, և Թուրքիայի իշխանությունները աջակցություն են ցուցաբերել: «Պատերազմի ավարտից հետո վերադարձի հրաման է արձակվել, որպեսզի ցանկացողները կարողանան վերադառնալ: Իրավական տեսանկյունից վերադարձողների համար պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Հայրենիք վերադարձածների ապրանքները վերադարձվել են, ստեղծվել են հանձնաժողովներ՝ վերադարձողների ապրանքների վերադարձի համար: Վերադարձողների ճանապարհածախսը հոգացել է պետությունը, նրանք ազատվել են որոշ հարկերից» [Yılmaz, 2023, 147]:

Ինչպես վերը նշել ենք, թուրքական դասագրքերում շարադրվածը ակնհայտորեն հակասում է պատմական փաստերին՝ ցեղասպանությունից հետո հայերի զանգվածային տեղահանությունների և կոտորածների մասին:

- Արտաքին ուժերի դերի ընդգծում: Հատուկ ուշադրություն է դարձվում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական շահերին, որոնք, ըստ թուրք հեղինակների, օգտագործել են հայերին՝ Օսմանյան կայսրությունը քայքայելու նպատակով: Տեքստում շեշտադրում անելով այդ պետությունների վրա՝ փորձ է կատարվում կասկածի տակ դնել Հայոց ցեղասպանության մասին պնդումները՝ դրանք ներկայացնելով որպես օտար ուժերի դավադրություն: Դասագրքում ներկայացվում է հետևյալ կերպ. «Հայերի հետ կապված Ռուսաստանի նպատակն էր ստեղծել հայկական պետություն Անատոլիայի արևելքում և այս նահանգով հասնել Միջերկրական ծով և, հետևաբար, տաք ծովեր: Նմանապես, Անգլիան ցանկանում էր, որ այս տարածաշրջանում իր հովանու ներքո ստեղծվի հայկական պետություն: Այս կերպ, Անգլիան նպատակ ուներ կանխել Ռուսաստանի մուտքը Միջերկրական ծով՝ ստեղծելով Ռուսաստանի դեմ բուֆերային գոտի: Ինչպես կարելի է հասկանալ երկու պետությունների քաղաքական

քաղաքականությունից, հայկական հարցը հայկական հարցը չէ. Այն ի հայտ եկավ Ռուսաստանի և Անգլիայի շահերին համահունչ, որոնք ցանկանում էին քայքայել Օսմանյան կայսրությունը» [Yılmaz, 2023, 147]:

• Թուրքական հաղթանակի փառաբանում: Նույն թեմայի շրջանակում գովաբանվում է թուրքական բանակի հաղթանակը Քազըմ Կարաբեքիրի գլխավորությամբ, երբ «ջախջախեցին» հայերին և կանխեցին նրանց նպատակներին հասնելը: Սա հայ ժողովրդի պայքարը ազատագրման համար ներկայացնում է որպես պարտություն՝ հերոսացնելով թուրքական կողմը: «Առաջին համաշխարհային պատերազմից հետո իմպերիալիստական պետությունները գրավեցին Անատոլիան: Նրանք իրենց հետ համագործակցած հայերին խոստացել են պետություն ստեղծել Արեւելյան Անատոլիայի շրջանում: Հայերը Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությամբ գրավեցին Կարսը, Իղդիրը, Սարըքամիշը, Քաղըզմանը և Գյումրին: Սակայն թուրքական բանակը Քազըմ Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ջախջախեց հայերին և թույլ չտվեց նրանց հասնել իրենց նպատակներին: Հայկական պետությունը, որի կենտրոնակայանը գտնվում էր Երևանում, 1920 թվականի դեկտեմբերի 2-3-ը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հետ ստորագրված Գյումրու պայմանագրով ստիպված էր էվակուացնել գրավված տարածքները» [Yılmaz, 2023, 147]:

Այսպիսով՝ Թուրքիայի պատմության դասագրքերում ներկայացված Հայկական հարցը փորձում է ձևավորել ոչ թե բազմակողմանի և պատմականորեն ճշգրիտ պատկեր, այլ մի միակողմանի մոտեցում, որն արդարացնում է հայերի նկատմամբ իրականացրած բռնությունները և խեղաթյուրում է պատմությունը: Դասագրքերի վերանայումը և քննադատությունը կարևոր է, որպեսզի ընթերցողները հասկանան իրական պատմական իրադարձությունները՝ առանց ստերեոտիպերի և շահագրգիռ կողմերի ազդեցության:

Թուրքիայի պատմության դասագրքում ներկայացված «Հայկական անհիմն պնդումներ և պատմական փաստեր» խորագրով նյութը: Թուրքիայի դասագրքերում թեմային կից «Մեկնաբանություն» բաժնում որպես լրացուցիչ տեղեկատվություն բերված է Յուսուֆ Հարաջողլուի Թուրքերի հանարգիտարանում «Հայկական անհիմն պնդումներ և պատմական փաստեր» խորագրով նյութը: Վերջինիս հեղինակը թուրք պատմաբան և քաղաքական գործիչ Յուսուֆ Հալաչօղլուն 1993-2008 թթ. եղել է Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) նախագահ, Ազգայնական շարժում կուսակցության (MHP) անդամ, պատգամավոր: Վերլուծելով «Հայկական անհիմն պնդումներ և պատմական փաստեր» խորագրով նյութը վեր ենք հանում այնտեղ զետեղված հիմնական շերտերը, որոնք հստակ ներկայացնում են ցեղասպանության պնդումների շուրջ թուրքական մոտեցումը:

Այս տեքստից կարող ենք առանձնացնել բովադակային վերլուծության հետևյալ բաղադրիչները.

• Հակամարտություններ և հակասություններ։ Տեքստը մատնանշում է, որ թուրքական կողմի արխիվները մատչելի են եղել, բայց արևմտյան պատմաբանները, ըստ հեղինակի, մերժում են այդ փաստերի համակողմանի ուսումնասիրությունը։ Կարծիք է արտահայտվում, որ ցեղասպանության պնդումները քաղաքական նպատակներ ունեն և կապված են «Արևելյան հարցի» հետ [Yılmaz, 2023, 147]։

• Միջազգային դերակատարներ։ Նշվում են բազմաթիվ երկրներ՝ Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, որոնք իրենց պատմության մեջ նույնպես ունեցել են ցեղասպանություններ և զանգվածային ջարդեր, ինչը, ըստ նյութի, հաճախ անտեսվում է կամ մոռացվում է, մինչդեռ հատուկ ուշադրություն է դարձվում Օսմանյան կայսրության վրա [Yılmaz, 2023, 147]։

• Արխիվային հետազոտությունների քննադատություն։ Հեղինակը մատնանշում է, որ Հիլմար Կայզերի և Արա Սարաֆյանի նման հետազոտողները, չնայած օսմանյան արխիվներից ստացած նյութերին, խուսափում են օբյեկտիվ գնահատական տալ օսմանյան և արևմտյան քաղաքականությանը։ Ըստ հեղինակի, հարցը առաջադրվում է ավելի շատ քաղաքական նպատակներով, քան պատմական ճշմարտության համար [Yılmaz, 2023, 147]։

• Կասկածանք և հակասական հարցադրումներ։ Տեքստը մատնանշում է մի շարք հարցեր՝ զանգվածային գերեզմանների բացակայությունը, որոնք կասկած են հարուցում ցեղասպանության պնդումների վերաբերյալ։ Հեղինակը հարց է բարձրացնում, թե ինչու չեն գտնվել հայերի զանգվածային գերեզմանները, մինչդեռ թուրքերի գերեզմաններ հայտնաբերվում են [Yılmaz, 2023, 147]։

• Պատմության և քաղաքականության կապը։ Հեղինակը ներկայացնում է, որ Հայոց ցեղասպանության հարցը սերտորեն կապված է արևմտյան քաղաքական շահերի հետ՝ հատկապես «Արևելյան հարցի» համատեքստում, և պնդում է, որ հարցի վերարծարծումը նպատակ ունի թուլացնել Թուրքիայի դիրքերը [Yılmaz, 2023, 147]։

Այսպիսով, Թուրքիայի պատմության դասագրքում ներկայացված Յ. Հարաջօղլուի «Հայկական անհիմն պնդումներ և պատմական փաստեր» նյութը ակնհայտորեն ձևավորում է թուրքական պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի շուրջ։ Ավելին, տեքստում առկա են հակասություններ և տարաձայնություններ, որոնցով փորձ է կատարվում թերագնահատել ու աղավաղել Հայոց ցեղասպանության պատմական փաստերը՝ համեմատելով դրանք այլ երկրների ցեղասպանությունների և զանգվածային ջարդերի հետ։

Հեղինակի մոտեցումը, ինչպես նաև ցեղասպանության պնդումների մասին քաղաքական ակնկալիքների մեջ առաջադրված հարցադրումները, ձգտում են զերծ պահել թուրքական պատմագրությունը օբյեկտիվ գնահատականներից։ Այդ իսկ պատճառով, ընթերցողին տրվում է մի կողմնորոշված տեսակետ, որը նախորդում է

իրական պատմական ճշմարտությանը՝ կենտրոնանալով միայն քաղաքական շահերի վրա: Այսպիսով, «Հայկական անհիմն պնդումներ և պատմական փաստեր» թեման ներկայացնում է Հայոց ցեղասպանության պատմական իրողության մերժման փորձ, որը հիմնված է քաղաքական շահերի վրա՝ չունենալով բավարար պատմական հիմնավորում:

Եզրակացություն: Այսպիսով, այս դասը ներկայացնում է թուրքական դպրոցական դասագրքերի մոտեցումը Հայկական հարցի, հայերի ապրած կյանքի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որոնք ակնհայտորեն խեղթուրում են պատմական փաստերը և հաճախ ներկայացվում են ի վնաս հայերի: Վերլուծությունը ցույց է տալիս է, որ այս դասագրքերը հայերին ներկայացնում են որպես արտաքին ուժերի գործիքներ, որոնք կազմակերպել են ապստամբություններ Օսմանյան կայսրության դեմ՝ ռուսական և բրիտանական շահերին ծառայելու նպատակով: Դասագրքերը չեն բացատրում, թե ինչն է եղել հայերի պայքարի իրական պատճառը և փոխարենը ներկայացնում են նրանց որպես դավաճաններ, որոնց գործողությունները արդարացնում են Օսմանյան կայսրության կողմից իրականացրած ցեղասպանությունը: Դասագրքում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրականացրած գործողությունները ներկայացնում են որպես բնակչության անվտանգությունը ապահովելու քայլեր, երբ իրականում այն զանգվածային տեղահանություններ ու կոտորածներ էին: Արդարացնելով այդ քայլերը թուրք պատմաբանները խեղաթյուրում են պատմական իրականությունը: Հայերի տեղահանումը դիտարկվում է որպես «պաշտպանական միջոցառում», սակայն բռնությունները ու զանգվածային սպանությունները անտեսվում են:

Թուրքական մոտեցումը հակասում է միջազգային իրավունքի ու պատմության փաստերին, այն չի ընդունում ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն, ու օգտագործում է պատմությունը քաղաքական նպատակների համար՝ հակադրվելով արևմտյան պատմաբանների ուսումնասիրություններին: Այլ կերպ ասած, թուրքական դասագրքերը, փաստացի, քողարկում են հայկական ցեղասպանության իրականությունը և ձևավորում կեղծ պատմական պատրանք, որը շարունակում է պահպանվել Թուրքիայի կրթական համակարգում: Թուրքական դասագրքերում տեղ գտած այս թեմայի վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ թուրքական դասագրքերով ներկայացվող պատմությունը փոխում է հայերի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ այն փաստերը, որոնք, համաշխարհային պատմագիտության համաձայն, արդեն համարվում են հաստատված: Ավելին, նմանատիպ տեսություններով են Թուրքիայում դաստիարակվում սերունդներ, որոնք մի կողմից՝ համալրում են Հայոց ցեղասպանությունը ժխտողների բանակը, իսկ մյուս կողմից զուրկ մնում օբյեկտիվ ճշմարտությունը իմանալու հնարավորությունից:

Գրականության ցանկ

Yılmaz, 2023 – Yılmaz A., Tarih, 11. Ders Kitabı, Özgün Matbaacılık San. Tic. AŞ, Ankara, 2023, 240 s.